Կնքված պայմանագրերի մասին հայտարարություն

«Ապագա Տուր» ՍՊԸ-ի հյուրանոցային համալիրի մոտեցնող ճանապարհի և հեռահաղորդակցության գծի կառուցում
TUR-PPI-02

Ծրագրի անվանում՝ Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման
Երկիր՝ Հայաստան
Ծրագրի համար՝ P150327
Շնորհված ընկերություն՝ «ՎԵՀ ԻՇԽԱՆԱՍԱՐ ՍՊԸ ԵՎ ՀԻԴՐՈ ՍՊԸ» ՀՁ
Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան Կամոյի 22
Քաղաք/Մարզ՝ Երևան
Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն
Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ /ՀՏԶՀ/
Պայմանագրի կնքման ամսաթիվ՝ 12 դեկտեմբեր 2023թ.
Գնման ընթացակարգի եղանակ՝ «Ազգային մրցակցային մրցույթ»
Պայմանագրի գումար՝ 450,000,000 (չորս հարյուր հիսուն միլիոն), ներառյալ ԱԱՀ:
Տևողությունը՝ շինարարական աշխատանքների մեկնարկից մինչև ավարտը, նախատեսվում է՝ *210 օր*
Պայմանագրի շրջանակը.
Նախատեսվում է.
Բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է Ենոքավան գյուղից դեպի «Ապագա Տուր» հյուրանոցային համալիր տանող ճանապարհի վերջին, մոտ 3 կմ գրունտային հատվածի վերակառուցում: Վերակառուցման աշխատանքների ընթացքում նախատեսվում է գոյություն ունեցող ճանապարհի դժվար անցանելի և նեղ հատվածները հնարավորինս լայնացնել, ապահովելով շրջադարձերի անհրաժեշտ շարավիղները և երկայնական թեքությունները: Լայնացման հետևանքով որոշ հատվածներում սարի լանջի կտրման անհրաժեշտություն կառաջանա: Ճանապարհի ծածկույթը նախատեսվում է իրականացնել երկշերտ ասֆալտաբետոնով՝ երթևեկելի մասի լայնությունը - 4,5 մ, հողային կողնակներով և բետոնե ջրահեռացման առվակներով: Ձորակների հատվածներում նախատեսվում է տեղադրել ջճահեռացման խողովակներ, ձորակների եզրով՝ անվտանգության պաշտպանիչ տարրեր:

Հեռահաղորդակցության գիծը նախատեսվում է իրականացնել օպտիկական մալուխով, Իջևան – Ենոքավան - «Ապագա Տուր» հյուրանոցային համալիր ճանապարհի եզրով՝ մոտ 11 կմ երկարությամբ: Նախատեսվում է տեղադրել ДОТС-П-08У (1x8)-8кн տիպի օդային մալուղ, օգտագործելով գոյություն ունեցող էլեկտրահաղորդակցման հենասյուները և տեղադրելով 201 հատ նոր մետաղական հենասյուներ: